Բարև,

Ես՝ Մեգին եմ՝ Հայաստանի քո ընկերը: Գիտե՞ս՝ ինչու եմ քեզ համարում ընկեր, քանի որ գիտակցում եմ, որ ո՛չ դու, ո՛չ էլ ես մեղավոր չենք, որ հիմա մեր պետությունները թշնամացած են միմյանց դեմ: Նախ քեզ ուզում եմ պատմել իմ մասին: Ես ապրում եմ Հայաստանում, Արմավիրի մարզի Սարդարապատ գյուղում: Ուսանող եմ, սովորում եմ Երևանի Կոմիտասի անվան Պետ. Կոնսերվատորիայում, մասնագիտությամբ դասական երգչուհի եմ, այս տարի որակավորում ստացա որպես օպերային երգչուհի: Շատ–շատ եմ սիրում երգել, ու երազանքներիցս մեկն աշխարհահռչակ օպերային երգչուհի դառնալն է: Ի դեպ, ճանաչում եմ ադրբեջանցի մի տենորի, շատ հայտնի է, անունը՝ Յուսիֆ Էյվազով, շատ լավ է երգում, ամուսնացած է աշխարհահռչակ օպերային երգչուհի Աննա Նետրեբկոյի հետ, ինստագրամով հետևում եմ նրանց, ու իմ ընկերները շատ հանգիստ են վերաբերվում այդ փաստին: Գիտե՞ս, շատ եմ ուզում նաև լինել ձեր՝ Բաքվի օպերային թատրոնում. նկարներով տեսել եմ, շատ գեղեցիկ թատրոն ունեք: Կուզեմ իմանալ՝ դու ինչ նախասիրություններ ունես, որտեղ ես սովորում, ինչ մասնագիտություն ունես:

Եվ այսպես, անցնեմ բուն թեմային. ես շատ եմ եղել Հայաստանի և Ղարաբաղի սահմանամերձ գյուղերում, խոսել եմ տեղի բնակիչների հետ ու նրանց հարց եմ ուղղել. ի՞նչ կուզեիք, պատասխանը հետևյալն էր՝ խաղաղություն, որ երբեք չլսեն կրակոցներ, հանգիստ իրենց տներից դուրս գան ու բակում շրջեն՝ չվախենալով, որ մի գեղեցիկ օր ադրբեջանցի ինչ–որ զինվորի մեկ փամփուշտով կարող է ընդհատվել իրենց կյանքը, որ իրենց որդուն բանակ ճանապարհելիս արցունքներով չճանապարհեն, այլ՝ ուրախությամբ, որ գիշերները խաղաղ քնեն, որ իրենց հոգում և մտքում բույն չդնի սարսափը:

Ձեր և մեր մայրերը ուզում են, որ իրենց զավակները, մեկնելով բանակ, անվնաս վերադառնան հայրենի տուն: Ես վստահ եմ, որ քո հայրենակիցները, որոնք ապրում են սահմանամերձ գյուղերում, նույնն են ուզում ՝ խաղաղություն: Մենք պատերազմ չենք ուզում, մենք խաղաղ ժողովուրդ ենք: Գիտեմ՝ կորուստները մեծ են. և՛ ես, և՛ դու ունենք սահմանում զոհված ընկերներ, եղբայրներ, և հենց կորստի ցավից չենք կարողանում իրար ներել: Եթե շարունակենք այսպես, հնարավոր է վերսկսվի նոր պատերազմ, ու կունենանք հազարավոր զոհեր, և կորուստն ավելի մեծ կլինի:

Ես հասկանում եմ, որ անհնար է ուժով խաղաղություն պահպանել: Խաղաղությունը հաստատվում է փոխըմբռնման շնորհիվ, ու քանի դեռ խաղաղություն չենք հաստատել մեր իսկ ներսում, ապա չենք կարող խաղաղություն գտնել արտաքին աշխարհում: Եթե դու իմ նամակը կարդում ես, ուրեմն՝ մեկ քայլ առաջ ես գնացել ու ուզում ես նույնը, ինչ՝ ես:

Ծնողներս միշտ պատմում են, թէ ինչպես ենք ժամանակին եղել բարեկամներ, իրար տուն հյուր ենք գնացել, հաց կիսել, մեր և ձեր երեխաները՝ իրար հետ խաղացել: Եթե ժամանակին լավ բարեկամներ ենք եղել, ուրեմն՝ հիմա էլ կարող ենք լինել: Ես հրաժարվում եմ ընդունել այն տեսակետը, որ մարդկությունը այնքան սերտորեն է կապված պատերազմի անաստղ կեսգիշերին, որ խաղաղության պայծառ արշալույսը

երբեք չի կարող իրականություն դառնալ: Ես հավատում եմ, որ անզեն ճշմարտությունն ու սերն են որոշիչ դեր խաղալու:

Խաղաղությունը ժպիտից է սկսվում. արի՛ ժպտանք ու ասենք՝ ներել ենք:

Անհամբերությամբ սպասում եմ նամակիդ:

Սիրով՝

Քո ընկեր